Վերապատրաստվող ուսուցչի

Հետազոտական աշխատանք

Հետազոտության թեման ——Ուղղագրության հմտությունների ձևավորումը տարրական դպրոցում

Հետազոտող ուսուցիչ—— Եպրաքսյա Աղումյան

Արագածոտն մարզ, քաղաք Աշտարակ
Ն. Աշտարակեցու անվան հմ1 հիմնական դպրոց

Աշտարակ

2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեմայի ուսումնասիրման արդիականությունը 3
Հետազոտության նպատակը 4
Հետազոտության խնդիրը 4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5
ԹԵՄԱՅԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ 5
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ 6
ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ_____ 8
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑ 10
ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ _____ 12
Եզրակացություն 13
Օգտագործված գրականություն 14

Հետազոտության արդիականություն

Մեր կրթական համակարգում կարևորագույն խնդիր է մայրենիի ուսուցումը. նրա ծրագրային նյութերի ամբողջական յուրացումով է պայմանավորված երեխայի կենսագործունեությունը և հետագա ուսումնական գործընթացի ողջ արդյունավետությունը: Առանց մայրենի լեզվի իմացության անհնարին է մյուս ուսումնական առարկաների ծրագրային նյութի յուրացումը: Մայրենի լեզվի դասավանդման կարևորագույն խնդիրների՝ խոսելու, հաղորդակցվելու, կարդալու և գրելու կարողությունների որոշակի մակարդակի ձևավորումն ընկած է հանրակրթական դպրոցի կրթադաստիարակչական աշխատանքների հիմքում: Դրանց անբավարար ձևավորումը կխոչընդոտի երեխաների՝ աշխատանքային գործունեության մեջ ընդգրկմանը: Որպեսզի հաղորդակցումն իրականացվի գործունեության այդ ձևին ներկայացվող պահանջներին համապատասխան, անհրաժեշտ է կարևորել լեզվի ուղղագրությունը, իսկ բանավոր խոսքի պարագայում՝ ուղղախոսությունը:

Տարրական դասարաններում բառերի ուղղագրությունը մտապահելու համար աշակերտները պետք է բառը տեսնեն,լսեն,բարձրաձայն արտասանեն,գրեն,ստուգեն և հաճախ գործածեն տարբեր վարժություններում:

Տարրական դասարաններում ուղղագրության ուսուցումը չի իրականացվում որպես առանձին բաժին, սակայն առանց ուղղագրական գիտելիքների ուսուցման և ամրակայման, դրանց՝ հմտությունների վերածման, մայրենիի դասը հնարավոր չէ պատկերացնել: Դրա նպատակն է զարգացնել և ամրակայել բառերի ճիշտ ուղղագրության կարողությունները:

Տարրական դպրոցում հայոց լեզվի դասավանդումը հետապնդում է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծումը.

- Գրագիտության ուսուցում,անսխալ ու վարժ գրելու և կարդալու հմտությունների ձևավոևում:
- Աշակերտների բառապաշարի հարստացում՝ուղղված ծրջապատող աշխարհի առարկաների ու երևույթների ճանաչմանը:
- Հայոց լեզվի կառուցվածքի, լեզվական միավորների և դրանց միջև առկա հարաբերությունների մասին համակարգված գիտելիքների ուսուցում:
- Լեզվաքերականական գիտելիքների հիման վրա խոսքի և դրա միավորների վերլուծության կարողությունների ձևավոևում:

Որպես մանկավարժական երևույթ՝ գործնական աշխատանքը մի կողմից ուսումնական առաջադրանք է ,այսինքն՝ այն, ինչ պետք է անի աշակերտը, մյուս կողմից՝այդ առաջադրանքների կատարման ընէացքում համապատասխան գործունեություն՝հիշողության,մտածողության,ստեղծագործական երևակայության դրսևորման ձև,որն արդյունքում աշակերտին տալիս է միանգամայն նոր,նախկինում նրան անծանոթ գիտելիքներ,կամ էլ արդեն ունեցած գիտելիքների խորացում:Ինչպես

հայտնի է ,բառերի ուղղագրության ավելի լավ մտապահման համար անհրաժեշտ է ներգրավել հիշողության բոլոր ձևերը՝ տեսողական, լսողական, շարժողական, այսինքն՝ բառերը բարձրաձայն արտասանել, գրի առնել և ստուգել գրվածը: Բացի այդ, հարկավոր է հնարավորինս հաճախ տարբեր վարժություններում գործածել մտապահման ենթակա բառերը:Այսինքն ուղղագրական հմտությունների մշակումը բավականին բարդ և ժամանակատար գործընթաց է:

Հետազոտության նպատակը՝

Ուսումնասիրելով ուղղագրության ուսուցման սկզբունքներն ու մեթոդները՝ քննել կրտսեր դպրոցականների ուղղագրական կարողությունների ձևավորման գործընթացի արդյունավետության բարձրացման հնարավորությունները:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել ուղղագրության ուսուցման սկզբունքներն ու մեթոդները և ուղղագրական կարողությունների ձևավորման գործընթացը.
2. Ժամանակակից տեխնոլոգրաների միջոցով բարձրացնել գրագետ գրավոր խոսք ունենալու հմտությունները:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

« Լեզուն է ամեն մի ժողովրդիազգային գոյության և էության ամենախոշոր փաստը, ինքնուրույնության ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմության և հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների, ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը: »

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Թեմայի ձևակերպում

Ուղղագրությունը ճիշտ գրելու կանոնների ամբողջությունն է: Այդ կանոնները ստեղծելիս հաշվի են առնվում հնչման ու տառագրության բոլոր առանձնահատկությունները: Ինչպես նշում է Ա. Սուքիասյանը, «սովորաբար լեզվի հնչյունական համակարգի և այբուբենի լրիվ համապատասխանություն գոյություն չունի: Տառերի գործածությունը կարգավորվում է ուղղագրությամբ մշակված կանոնների միջոցով»:

Ուղղագրության կանոններ սահմանելիս հաշվի են առնվում ոչ միայն տառագրության նորմաները, այլև բառերի ու բառաձևերի նշանակությունը: Ստեղծվում են գրության խմբեր, որոնց ամփոփման շնորհիվ սահմանվում են ուղղագրության կանոններ:

Հայերենի ուղղագրության մեջ մտնում են.

1. ձայնավորների և բաղաձայնների ուղղագրությունը,
2. երկհնչյունների ուղղագրությունը,
3. քերականական ուղղագրությունը:

Ուղղագրական կանոնները ձևակերպվում են ըստ լեզվի հնչույթային համակարգի և որոշակի ժամանակի համար ընդհանուր ընդունելություն գտնելով՝ պարտադիր են դառնում բոլորի համար:

Հայոց լեզվի ուղղագրությունը կապվում է հայ գրի և գրականության ստեղծման հետ և նախապես եղել է հնչյունային ուղղագրություն: Ըստ այդմ էլ հին հայերենում՝ գրաբարում, բառերը գրվել են այնպես, ինչպես արտասանվել են, օրինակ՝ մարդ, լոյս, զուարթ, ծառայ և այլն: Այդ ուղղագրությունը, որը կոչվում է գրաբարյան կամ հին ուղղագրություն, որով էլ մեծածավալ

գրականություն է ստեղծվել, միշտ նույնը չի մնացել, և, պայմանավորված լեզվի հնչյունական կազմում տեղի ունեցող փոփոխություններով, իր հերթին նույնպես որոշակի փոփոխություններ է կրել:

Միջին դարերում հայերենի այբուբենում ավելացվել են օ և ֆ տառերը, որոնցից վերջինով գրվում են ֆ հնչյունն ունեցող փոխառյալ բառերը, իսկ օ–ով՝ բաղաձայնից առաջ գրաբարյան աւ երկբարբառը:

Հայտնի է, որ ժամանակի ընթացքում ընդհանրացել են մի քանի տառերի, ինչպես՝ վ-ի, ւ-ի և ու-ի, ե-ի և է-ի, յ-ի և հ-ի հնչումները: Այդ պատճառով նույնիսկ գրաբարյան հին բնագրերում հաճախ խախտվել է դրանց ուղղագրությունը:

Գրաբարի հնչյունական ուղղագրությունը ճիշտ նույնությամբ չի պահպանվել միջին հայերենում: Վերջինս ունեցել է իրեն բնորոշ ուղղագրությունը, որը, խարսխվելով հիմնականում գրաբարյան ուղղագրության վրա, հատկանշվել է ավելի մեծ տարաձայնություններով ու շեղումներով: Սա էլ հիմք է տալիս միջին հայերենյան ուղղագրությունը համարելու հայոց լեզվի ուղղագրության պատմության երկրորդ շրջանը, որին էլ հաջորդում է նոր հայերենի՝ աշխարհաբարի ուղղագրությունը, մի ուղղագրություն, որն իր կանոններով ու օրենքներով ոչ թե միջին հայերենի, այլ դասական գրաբարի ուղղագրության հետ է առնչվում և դրա յուրահատուկ շարունակությունը կազմում:

Հետազոտության իրականացման մեթոդները

Ուղղագրության ուսուցումը երկակի նշանակություն ունի. մի կողմից այն կապվում է լսածը ճիշտ գրի առնելու կանոնների հետևողական կիրառության, իսկ մյուս կողմից՝ գրածը ճիշտ կարդալու, գրական արտասանության կամ ուղղախոսության ընդունված նորմաների ճիշտ պահպանման հետ[1]: Այս առումով էլ ուղղագրության ուսուցումը, հատկապես տարրական դասարաններում, սերտորեն առնչվում է ուղղախոսության ուսուցման հետ և մեծ արդյունք կարող է տալ միայն այն դեպքում, երբ հետևողականորեն պահպանում են այդ զուգորդումները:

Ուղղագրական օրինաչափությունների ուսուցումը, ըստ էության, մեծապես նպաստում է ոչ միայն ճիշտ գրելու, այլև անսխալ կարդալու կարողության մշակմանը և հսկայական նշանակություն ունի մարդու լեզվական մշակույթի բարձրացման համար: Հայտնի է, որ ուղղագրական սխալները հաճախ ոչ միայն մթագնում կամ աղավաղում են բառիմաստը, այլև փոխում նախադասության միտքը կամ երկընտրանքի ու կասկածի տեղիք տալիս:

Նման շփոթումներից խուսափելու համար հենց առաջին դասարանից սկսած որոշակի աշխատանք պետք է տանել աշակերտների մեջ անհրաժեշտ ուղղագրական կարողություններ մշակելու ուղղությամբ; Դրա համար երեխաներից ոչ միայն մտավոր լուրջ գործունեություն է պահանջվում, այլև լսողության, տեսողության, խոսելու օրգանների և ձեռքի մկանային համակարգի զարգացման նպատակով տարվող վարժությունների կատարման համեմատաբար ու հետևողական աշխատանք, որովհետև միայն այդ բոլորը համատեղ վերցված կարող են նպաստել բառի գրության մտապահմանը:

Երկրորդ դասարանում աշակերտները զուգահեռ դասընթացին ուսումնասիրում են նաև ձայնավորների, բաղաձայնների և երկհնչյունների ուղղագրությունը և ուղղախոսությունը: Որպեսզի նրանց մոտ ավելի տպավորիչ լինի որոշ բառերի գրությունը, օրինակ՝ ե(յէ) տառի ուղղագրության և ուղղախոսության ուսումնասիրության ընթացքում կարող ենք օգտագործել հետևյալ հնարը: Զբոսանք պատկերասրահում մեթոդի օգնությամբ դասարանում դրվում են մի քանի նկարներ և առարկաներ, որոնց գրության ժամանակ հանդիպում ենք ե(յէ) տառը տարբեր դիրքերում: Այդ առարկաները կարող են լինել. եղնիկ, ելակ, սեղան(խաղալիքներ), տետր, նկարներում նույնպես կլինեն այդպիսի պատկերներ: Աշակերտներից մի քանիսը կշրջեն, կշոշափեն իրերը, կդիտեն նկարները, ապա կասեն անունները և կգրեն դրանք գրատախտակին: Այսպես՝ կկրկնեն բառերի արտասանության և գրության՝ իրենց կողմից ընկալված առանձնահատկությունները.

- բառասկզբում լսվում է յէ, գրվում է ե, բացառություն են կազմում եմ, ես, ենք, եք, են օժանդակ բայերը,
- բառամիջում լսվում է է, գրվում է ե(յէ):

Այս ամենը կատարելուց հետո կստանան առաջադրանք տեքստից դուրս գրել այն բառերում, որոնցում ե-ն լինի բառասկզբում, բառամիջում և բառավերջում[2]:

Մայրենի լեզվի տարրական դասընթացում ուղղագրության ուսուցման առանձին բաժին չկա, սակայն ուղղագրության ուսուցումը կազմում է այդ դասընթացի հիմնական խնդիրներից մեկը, քանի որ առանց ուղղագրության և ուղղախոսության տարրական գիտելիքների դժվար է պատկերացնել կարդալու և գրելու, բանավոր և գրավոր խոսքի ուսուցումը:

Հայերենի ուղղագրության մեջ տարբերակվում են մի քանի բաժիններ[3].

1.<u>Ձայնավորների ուղղագրություն</u>, որի մեջ մտնում են օ(ո), է(ե), ը ձայնավորների ուղղագրությունը բառասկզբում և բառամիջում, ո, ե, երկհնչյունը, և եռահնչյուն և երկհնչյուն տառերի ուղղագրությունը բառասկզբում և բառամիջում, ը-ի և և-ի ուղղագրությունը տողադարձի ժամանակ:

2.<u>Երկհնչյունների ուղղագրություն,</u> որի մեջ մտնում են յա, յու, յո, յե, յի և այ, ույ, ոյ, եյ երկհնչյունների, այսինքն՝ յ կիսաձայնի և ա, օ, ու, ի, է

[2]Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Գրիգորյան Ս., Խաչատրյան Հ., «Մայրենի 2», Հանրակրթական դպրոցի 2րդ դաս. դասագիրք, Երևան, «ՄԱՆՄԱՐ»,2010, էջ 7:

[3]Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, էջ 518: 10

ձայնավորների կապակցությունների ուղղագրությունը:

Տարրական դասարաններում այս ուղղագրությունն առանձին բաժնով չի ուսումնասիրվում, նրա առանձին տարրեր ձուլվում են ձայնավորների ուղղագրության հետ: Ձայնավորների ուղղագրության մեջ է մտնում նաև յ ձայնակապի և նրա գործածության ու տողադարձի հետ կապված ուղղագրական դեպքերի ուսուցումը:

3.<u>Բաղաձայնների ուղղագրություն</u>, որի մեջ մտնում է երկաստիճան և եռաստիճան այն բաղաձայնների ուղղագրությունը, որոնք իրենց տեղերը փոխում են արտասանությամբ շատ նման իրենց համապատասխան զույգերի հետ (բ-փ, գ-ք, դ-թ, ձ-ց, ջ-չ, ղ- խ, հ)և որոնց ուսուցումը մեծապես կապվում է նաև ուղղախոսության հետ:

4.<u>Քերականական ուղղագրություն</u>, որի մեջ մտնում են խոսքի ձևաբանական և շարահյուսական միավորների ուղղագրական օրինաչափությունները՝ մեծատառը բառասկզբում և նախադասության սկզբում, ուրիշի խոսքի գրությունը, գոյականների հոգնակիի կազմության առանձին դեպքերը, օժանդակ բայի գրությունը և շատ այլ դեպքեր, որոնք քերականական հիմնավորում ունեն:

Քերականական ուղղագրության մեջ է մտնում նաև տողադարձը;

Տարրական դասարաններում ուղղագրության ուսուցումը, ըստ էության, միաձուլվում է մայրենի լեզվի ամբողջ դասընթացի հետ և ամբողջ ուսումնառության ընթացքում մատուցվում է փոքրիկ բաժիններով, որոնք տրվում են որոշակի ընդմիջումներով, որպեսզի հնարավոր լինի այդ ընթացքում ուսուցված կանոնը լրիվ յուրացնել տալ: Այս առումով ուղղագրության ուսուցումն իսկապես բազմաթիվ թելերով միահյուսվում է լեզվի ուսուցման ուղղությամբ տարվող մյուս բոլոր աշխատանքների հետ՝ որպես դրանց բաղկացուցիչ մաս:

Ուղղագրության ուսուցման ձևերն ու մեթոդները:

Ուսումնական գործընթացը կազմակերպելու համար կազմել եմ փոքրիկ քարտեր, որոնց վրա գրել եմ առաջադրանքները:Քարտերը նախատեսված են երկրորդ դասարանի աշակերտների համար և պարունակում են այդ նպատակի համար անհրաժեշտ առաջադրանքներ: Դրանք համապատասխանում են ուսումնական ծրագրին և Մայրենի 2 դասագրքին:Քարտերում ընդգրկված են այն բառերը ,որոնք կան դասագրքի գրեթե յուրաքանչյուր թեմայի վերջում:Քարտերը օգտագործում եմ ի լրումն դասագրքում տրված նյութերի:Այն ինձ հնարավորություն է տալիս՝

1.բացահայտել յուրաքանչյուր աշակերտի անհատական ընդունակությունները,

2.առավել հետաքրքրաշարժ ու բազմաբովանդակ դարձնել ուսուցման գործընթացը:

Նպատակահարմար է քարտերը համարակալել: Օրինակ՝,ՈՒՀ_1(Ուղղագրական հմտություններ),ՏԲ-1 (Տեղադրի՛ր բառը),ԻԱ-1(Ինքնուրույն աշխատանք):

Քարտերը կիրառել եմ այն ժամանակ,երբ դասարանը յուրացրել էր «Պատմվածքն ընթերցող է փնտրում» թեման: Քարտերը միաժամանակ բաժանել եմ ամբողջ դասարանին՝ բացատրելով աշխատանքի քայլաշարը:

Դասարանը բաժանել էի խմբերի ,յուրաքանչյուր խմբում 4 աշակերտ:Նախ խումբը ստանում է երկուական քարտ ՈՒՀ-1 և ՈՒՀ-2,այնուհետև իր տետրում գրում է քարտի համարը, արտագրում բառերը և ընդգծում այն տառերը,որոնց ուղղագրությունը պետք է հիշել:Բոլոր բառերն արտագրելուց և համապատասխան տառերն ընդգծելուց հետո այն աշակերտը,որն աշխատել էր ՈՒՀ-1 քարտով , զույգ է կազմում մյուս խմբի՝ՈՒՀ-2-ից մեկի հետ :Սկսվում է զույգային աշխատանքը:Առաջին աշակերտն իր ընկերոջը թելադրում է իր քարտի համարը(ինչը ընկերը պետք է գրի առնի իր տետրում),առաջին բառը և խնդրում ընդգծել այն տառը,որի ուղղագրությունն անհրաժեշտ է հիշել:Լսելով ընկերոջ պատասխանը՝ նա համեմատում ՝ իր քարտում գրված ճիշտ պատասխանի հետ,իսկ անհրաժեշտության դեպքում ուղղում է ընկերոջ թույլ տված սխալը:Հետո շարունակում է թելադրել քարտի մնացած բոլոր բառերը:Բոլոր բառերը թելադրելուց հետո աշակերտները փոխում են դերերը:Այժմ երկրորդ աշակերտն է դասընկերոջը թելադրում քարտի համարը և բառերը:

Երբ ավարտվում է բառերի երկուստեք թելադրանքը, աշակերտներրն ավարտում են աշխատանքը և բաժանվում:

Զույգային աշխատանքից հետո յուրաքանչյուր աշակերտ իր տետրում ունեցավ ՈՒՀ-1 և ՈՒՀ-2 քարտերում գրված բառերը՝ընդգծված տառերով:Նման աշխատանքը կատարում եմ գրեթե յուրաքանչյուր դասին՝5-6 րոպե տևողությամբ:

Հաջորդ դասերին արդեն աշխատում են համապատասխանաբար ՝ՏԲ և ԻԱ քարտերով:

Յուրաքանչյուր աշակերտ քարտերը ստանում է հետևյալ հաջորդականությամբ՝ՈՒՀ_ՏԲ_ԻԱ:

Օրինակներ՝

ՈՒՀ-ուղղագրական հմտություններ

Բառերն արտագրի՛ր տետրում:Ընդգծի՛ր այն տառերը,որոնց ուղղագրությունը պետք է հիշել:Բացատրի՛ր բառերի իմաստը.

Առաջ,խնդրել,կարդալ,երկրորդ,վերջապես

ՏԲ-Տեղադրի՛ր բառերը

Կարդա՛: Նախադասություններն արտագրի՛ր տետրում՝ տեղադրելով անհրաժեշտ բառը:Ընդգծի՛ր այն տառը,որի ուղղագրությունը պետք է հիշել:Օգտվի՛ր օգնող բառերից:

1.---------- եկավ սպասված պահը:

2.Աննան արդեն գրում ու ---------- է:

3.Մեր դասասենյակը գտնվում է---------- հարկում:

4.Արամը ---------- հայրիկին օգնել իրեն:

(օգնող բառեր՝ կարդում,երկրորդ,վերջապես,խնդրեց)

ԻԱ –Ինքնուրույն աշխատանք;

Բառերն արտագրի՛ր տետրում:Տեղադրի՛ր բաց թողնված տառերը.

Թռ-ել,վեր-,վեր-ապես,երկրոր-,առա-ին,ի-նել,խն-րել,մար-,կար-ալ,սերկ-իլ,դեղ-,մի-ուկ

Նման ուսուցման գործընթացը ճիշտ կառավարելու համար կիրառում եմ հաշվառման աղյուսակ , որտեղ նշում եմ աշակերտների անունները և քարտերի համարները:Այս ձևով ուսուցման գործընթացն ավելի արդյունավետ է և հետաքրքիր:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դասարան IIգ

Առարկան Մայրենի /Գրավոր/

Դասի թեման ՝ Օ-ի և Ո-ի ուղղագրություն

Դասի նպատակները՝ստուգել հետևյալ կարողությունները

- հնչյուն և տառ հասկացությունների մասին ունեցած գիտելիքները կիրառելու,
- ձայնավոր և բաղաձայն հնչյունների մասին ունեցած գիտելիքները կիրառելու՛
- օ(ո) ,է (ե) ձայնավորները ճիշտ գրելու
- տողադարձի,տողադարձի ժամանակ ը գաղտնավանկի գրության մասին ունեցած գիտելիքները կիրառելու:

Վերջնարդյունք –Ատագրի,գրի,գրավոր փոխադրի ոչ մեծ տեքստեր,կատարի առաջադրանքները

Դասի ընթացքը ՝

Խթանման փուլ - Դասը սկսել մնջախաղով . Մի քանի աշակերտ ստանում են թղթեր, որոնց վրա գրված են բառեր: Պահանջվում է մնջախաղով այնպես ներկայացնել, որ ընկերները կարողանան գուշակել բառերը (ոզնի,տերև,խաղող, փոքրիկ, հագնել): Աշակերտները խաղի ընթացքում մոտիվացվում են և նախապատրաստվում խմբային աշխատանքին:

Խմբային աշխատանք՝

Արտագրի՛ր բառերը և կատարի՛ր ստուգում:

Իջնել,փոքրիկ,ոսկեհատիկ,արևոտ,մարդ,տերև,միրգ,խաղող,

հագնել,ոզնի,,զարդարվել,Ոսկան,դեղձ,սերկևիլ,օր:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՓՈՒԼ

Արտագրություն՝առաջադրանքներով

1. Արտագրվող նյութի լուռ ընթերցում :
2. Ուղղագրական տառերի ճիշտ տեղադրում:
3. Առաջդրանքների բովանդակության ընկալում և կատարում:

Արտագրի՛ր տեքստը՝լրացնելով բացթողնված **o** *կամ* **n** *տառերը:*

_սկան պապը խնամում է խաղ _ղի այգին:Մի _ր պապն այգում փ_քրիկ ոզնի տեսավ: Նա ոզնին տվեց Ոսկեհատին: Ոսկեհատը _րոշեց _զնուն կաթով կերակրել:

1.*Բաժանի՛ր վանկերի տրված բառերը.*

ոզնի _____

խաղող _____

նկար _____

2. *Տրված բառերը փոխարինի՛ր հակառակ իմաստ ունեցող բառերով*

բարի _____

ուրախ _____

3. *Գրի՛ր քանի տառ ու հնչյուն կա* ***էլակ*** *բառում:*

Հնչյուն՝_____, տառ՝_____:

Կշռադատման փուլ՝ Նյութի բովանդակության մեկնաբանում,սխալների ուղղում:

Վերլուծություն

Դասի ընթացքում աշխատել եմ հնարավորինս միմյանց հետ կապակցել դասի փուլերը :Նախ խաղի միջոցով երեխաների ուշադրությունը կենտրոնացրեցի այն բառերի վրա,որոնք դեռ պետք է գրավորի ժամանակ հանդիպեին:Այնուհետև՝ խմբերով աշխատելու ժամանակ, մեկ անգամ ևս կրկնեցին,ինչու չէ նաև սովորեցին որոշակի թվով բառերի ուղղագրությունը և կատարեցին ինքնուրույն աշխատանք՝արդեն անհատական թերթիկների վրա արտագրելով տեքստը և լրացնելով բաց թողնված տառերը:Այս աշխատանքները նախ նախապատրաստեցին,հետո օգնեցին հետագա աշխատանքը կատարելուն:Հաջորդ առաջադրանքներում էլ արդեն կիրառեցին իրենց ունեցած գգիտելիքները և ավարտեցին գրավոր աշխատանքը:

Սխալների ուղղման ժամանակ հատուկ ուշադրություն դարձրեցինք տողադարձին «խը-նամել», «տը-վեց», «ոզ-նի» բառերում:

Մեկ անգամ ևս ստուգեցին «հնչյուն» և «տառ» հասկացությունների մասին ունեցած գիտելիքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուղղագրության ուսուցումը մայրենի լեզվի տարրական դասընթացի կարևորագույն բաղադրիչներից մեկն է: Այն տարբեր ընդգրկումով և խորությամբ ուսուցանվում է տարրական բոլոր դասարաններում :

1.Ուղղագրական կարողության ձևավորումը երկարատև գործընթաց է և պահանջում է հայերենի ուղղագրության տարբեր սկզբունքների հաջորդական ուսուցում և ուսուցման տարբեր մեթոդների կիրառում:

2.Հնչյունային ուղղագրության ուսուցման գործընթացում էական դեր են կատարում հետաքրքրաշարժ առաջադրանքները, որոնք նպաստում են գիտակցականության սկզբունքի կիրառման միջոցով բաղաձայնների ուղղագրության ամրակայմանը:

3.Հետաքրքրաշարժ առաջադրանքներն անփոխարինելի դեր են կատարում բաղաձայնների ավանդական ուղղագրության ուսուցման գործընթացում,քանի որ նպաստում են գիտակցական սկզբունքի ներդրմամբ ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

4.Հետաքրքրաշարժ առաջադրանքները կարող է կիրառվել ուղղագրության ուսուցման այլ ձևերի շղթայում,ինչպիսիք են արտագրությունը, մարզողական վարժությունները, թելադրությունը և լրացնելով այդ համալիրը՝բարձրացնել ուղղագրական կարողության ձևավորման գործընթացի արդյունավետությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

[1] Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, էջ 518:
[1] Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Գրիգորյան Ս., Խաչատրյան Հ., «Մայրենի 2», Հանրակրթական դպրոցի 2րդ դաս. դասագիրք, Երևան, «ՄԱՆՄԱՐ»,2010, էջ 7:
[1] Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, էջ 518:

[1] Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, էջ 519:

Նախաշավիղ